

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաբանսիր բառին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋԻՎԱՅ 1899 ԹԻՎԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(27-րդ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԴՐԻ

«ՄՇԱԿ»-ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎՎԻ ՆՈՑՆ ՊՐՕԳՐԱՄՄՈՎ ԵՒ ՆՈՑՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ. «Մշակ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եոթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. և մի ամսականը՝ 1 ռուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄՈՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամբողջ տարեկանը պէտք է վճարեն տարեկան 6 ռուբլի. Սւրբոյ ալի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«ՄՇԱԿ»-ԿՆ ԳՐՎԵՐ ԿԱՐԵԼԻ Է ԽՐԱԳՐԱՄՄԱՆԸ (Բարձրագոյն և Բարձրագոյն փողոցներէն անկիւն): Կարգադրութեան ուրիշ քաղաքներէն «ՄՇԱԿ»-ԿՆ ԳՐՎԵՐ ԿԱՐԵՐ, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է գիտնալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакция „МШАКЪ“, իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien „MSCHAK“.

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Զ Է Ը Ն Գ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆԻԱԳՈՒԹԻՒՆ

Դա միակ միջոցը չէ. Ո՛վ չանկէց. — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հասարակութիւնը չէ մեղադար. Նամակ Բաթումից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐՎԱԿԱՆ. — ԳԻՂԱԿԱՆ ԳԵՅԵՐ:

ԳՍ ՄԻԱԿ ՄԻՋՈՑ ԶԷ

Կովկասեան աւազակութիւնները ռուսաց մամուլի ուշադրութիւնն են գրաւել տարիներէն ի վեր: Այդ մամուլի մի

ԲԱՆԱՍԻՐՎԱԿԱՆ

ԳԻՂԱԿԱՆ ՏԵՏԵՐ

Ամեն մի գիւղում, երբ խոսակցութիւն են ունենում ծերունիները հետ, միշտ այս խօսքերն են լսում. «Երբէ, այնքան փոքր է: Արքան էլ աշխատում են համոզել նրան, որ այժմ ամեն բան կերպարանափոխվել յարմարվել է ժամանակի պահանջներին և առաջադէմ քայլեր է արել զէպի լաւը, նա յամառութեամբ իր ասածն է պնդում: Խոր ընկնելով ծերունու ասածը և ծանօթանալով գիւղի կեանքի հետ, տեսնում են, որ ծերունին սխալված չէ իր համոզմունքի մէջ, որ այժմ գիւղացու դրութիւնը դժուար է վատ պայմանների մէջ և որ գիւղացին չէ օգտուելով կառավարութեան չնորհած օրէնքներով՝ զանազան խռնրդոտներ առաջացնող մարդկանց պատճառով: Արեւն ինչն է գիւղացու ներքայ աննախանձելի դրութեան պատճառը և նրա երջանկութեան արգելքները: Ինչպէս և առաջանում նրա չքաւորութիւնը: Ինչպէս այդպէս կերպարանափոխվել է պարզ նահապետական կեանքը, տեղի տալով մի ուրիշ ապականված և զանազան արտերով լի կեանքի: Ինչու կրօնաւոր գիւղացին այժմ սառնասիրտ է վերաբերվում զէպի իր եկեղեցին: Ո՛վքեր են այն մի քանի անհատները, որոնք խեղդում են գիւղացու ինքնաճանաչութիւնը, սահմանափակում նրա իրաւունքները, կաշկանդում ոտն ու ձեռք և դարձնում հրա հպատակ իրանց հաճութեանը: Ո՛վքեր են այդ դիմակաւորված բարեգործները, որ արդարութեան անունով և յօդուն ընդհանուր կեղծքում ու հարստացում են իր հակադրութիւնը, խեղճին, որբերին, այրիներին, իրական-

յայտնի մասը՝ հայրենասիրական և փիլիսոփայական զանազան խորհրդածութիւններով է կամենում լուծել աւազակութիւնների հարցը: «Մի հարց» որ ունի իր խոր, արմատական պատճառները և որի լուծման համար հարկաւոր են նոյնպէս արմատական միջոցներ: Ի՞նչ է աւազակութիւնների իսկական պատճառը. ի՞նչ գործօններ են արտադրում այդ ցաւալի երեւոյթը. ի՞նչ միջոցներով կարելի է վերջապէս, արմատախիլ անել այդ չարիքը, որ բուն է դրել երկրի մէջ և վնասում է նրա տրտեսական ու քաղաքացիական կանոնաւոր զարգացման: Այդ հարցերի բնագոտում

նապէս ոչնչով չը լինէր անցնելով այսպիսիների վիճակը, այլ միայն պարտադրելով իրանց որովայնները, և վերջն էլ պարզեւեւ դուրս գալով ու զլաւ մարդի տիրոջ ստանալով: Այս բոլոր հարցերին մենք ունենք մի պատասխան՝ այն ցեղերը, որ ծնվում են մեղանից: Ինչպէս ապացուց մեր վերջին խօսքերի, կը վերջենք մի քանի օրինակներ գիւղական առօրեայ կեանքից: Ներկայումս ոչ մի բան այնպիսի առաջադէմ քայլեր չէ անում գիւղական համայնքի մէջ, ինչպէս որ վաշխաւորութիւնը: Այս անուն արմատախիլ անելու համար դեռ են մեղանում չէ գործադրված ոչ մի միջոց, ուստի վաշխաւորները, արգելք չը հանդիպելով, շարունակում են բազմապիսի զոհեր թիւը: Գիւղացի երկրասարդը Բաղուս կամ Մնորկապեան երկրում ձեռք բերելով մի քանի հարկու բուրլի և վերադառնալով հայրենիք, անցնում է վաշխաւորների շարքը, և ահա մի քանի տարի անցնելուց յետոյ, նրա հարկւրները դառնում են հալարների ծաւալումը: Այսպիսի դարձումով վաշխաւորների համամատարար կարճ միջոցում փողեր զիջելով վրա, եթէ ի նկատի ունենանք, որ նրանց սովորութիւնն է պարտք տալու ժամանակ պահանջել «մանկիկ» երկու շահի մի ամիս ժամանակով: Աղքատ գիւղացու կրօնական րօպէն հարկերի հաւաքելու ժամանակն է: Հարկահանի մտաւր ստիպում է նրան դիմել գլուխով վաշխաւորին և ինդրել 20 ռուբլի, որը իսկոյն գրում է պարտաւորակը մի տարի ժամանակով, նշանակելով գումարը իր ուղածի համաձայն 44 ռուբլի: Անցնում է տարին, բայց աղքատ գիւղացին նոյն աղքատն է: Վաշխաւորն արդար է մուրհակ ևս մի տարի ժամանակով, այն դահադատութեամբ միայն, որ գումարը նշանակվում է 96 ռուբ. 80 կոպ: Լրանում է երկուրոր տարին: Գիւղացին այլ ևս հնարաւորութիւն չունի ոչ նորագել մուրհակը և ոչ վճարել պարտ-

թիւնը թէև ստեղծել է մի ամբողջ գրականութիւն, բայց քննադատութիւնը կատարվում է այնպիսի եղանակով, որով և կանխակալ նպատակներով, որ անհնարին է հասնել ցանկալի լուծման. շօշինիստական, կողմնակալ և թիւս-ազգասիրական բնագոտութիւնը հասաւ մինչև այնտեղ, որ սկսեցին քարոզել, թէ Կովկասում տիրող աւազակութիւնների պատճառը պէտք է որոնել մի որոշ ազգութեան ձգտումների մէջ: Այդպիսի զառանցանքներով չէ կարելի, ի հարկէ, մօտենալ հարցին նոյն իսկ տեսականապէս: Հարկաւոր է որ երևան գայ անաչառ և կուսակցական ու շօշինիստական ձգտումներից ազատ և լոկ իրողութիւնների, պատմական փաստերի թրջաւորումներով, վիճակագրական տեղեկութիւնների վրա հիմնված քննադատութիւնը: Աւազակութիւնները ծաղկում էին Կովկասում, երբ սա գտնվում էր թիւրքական և պարսկական տիրապետութեան տակ և ծաղկում էին աւելի լայն ծաւալով. ուրեմն երեւոյթը պատմական է: Պէտք է, ի հարկէ, սպասել, որ երբ մեր երկրի մէջ մտցրվեց հաստատ օրէնք, կարգ ու կանոն, երբ տարածվեց քաղաքակրթութիւնը, երբ կամայականութիւնը սանձահարկեց, պատմական տիրու ժառանգութիւնը կանահետանալ, կը չքանա և աւանդութիւնների կարգը կանցնէ: Սակայն նա չանհետացաւ և հիմա էլ օրվայ չարիք է, որ վնասում է երկրի ազգաբնակչութեան խաղաղ, աշխատասէր, հողագործ դասին, առանց ազգութեան խտրութեան՝ և՛ հային, և՛ թուրքին, և՛ վրացուն, և՛ ռուսին: Պարզ է, որ կայ մի էական պատճառ և չարիքը արմատախիլ անելու համար պէտք է որոնել, գտնել այդ էական պատճառը. իսկ գտնելու համար հարկաւոր է ուսումնասիրութիւն և ոչ թէ առասպել: Լուրջ ուսումնասիրութիւն շատ քիչ է պատահում ռուսաց մամուլի «յայտնի մաս» մէջ, որը, սակայն, ամենայն առատու-

թեամբ առասպելների մի ահագին գրականութիւն է արտադրել կովկասեան աւազակութիւնների դիմակի տակ: Եւ այդ է պատճառը, որ մենք հաճութեամբ կարգացինք մի կարծիք կովկասեան աւազակութիւնների մասին, որը, որքան հեղինակաւոր, նոյնքան և լուրջ կարելի է համարել: Դա՛ կովկասեան, ուսումնասիրական շրջանի հոգաբարձու պ. Յանսօփուկարժեքն է, որ գրված է շրջանի 1897 թ.ի պաշտօնական տեղեկագրի մէջ և որի վրա մենք գովասանքով մատնացող է անում ռուսաց մամուլի լուրջ մասը: Պ. Յանսօփուկաւ առաջ բերած փաստերից երևում է, որ Կովկասում դպրոցների պահպանութեան համար կառավարութիւնը ծախսում է տարեկան 11½ միլիոն ռուբլի, սակայն դպրոցներ ասելով բացառապէս պէտք է հասկանալ միջնակարգ դպրոցները, սկզբնական, տարրական կրթութիւնը կամ ժողովրդական դպրոցը գրեթէ երեսի վրա է ձգված և շատ աննախանձելի վիճակի մէջ է գտնվում: Մուսուլման ազգաբնակչութեան համար գրեթէ դպրոց չը կայ. ամեն 30 հազար հոգու վրա մի դպրոց է ընկնում, հայ ազգաբնակչութեան վերաբերմամբ ամեն 15 հազար հոգու համար մի դպրոց է գալիս: Ապացուցված է, որ աւազակների մեծ մասը առաջ է գալիս «արեան վրէժանդութեան» սովորութիւնից, իսկ այդ սովորութիւնն ամուր հիմքեր ունի միայն տղէտ, խաւար ազգերի մէջ: Հենց որ այդ սովորութիւնը ջնջվեց, աւազակութեան մի գլխաւոր պատճառը ևս կը չքանա, իսկ այդ սովորութիւնը արմատախիլ անել կարող է միայն կրթութիւնը, դպրոցը: «Եթէ—ասում է պ. Յանսօփուկ—դպրոցների հաստատութեան և պահպանութեան համար գործադրվեն այն ահագին ծախքերը, որոնք անվում են տեղական պահապանների (земская стража) և աւազակներին հալածելու պաշտօն ունեցող ոստիկանների

նայ այս ցուցանիշից մի քանի հատ: Նրբ արդեօք մի համախոսական կարգվեց հեռացնել գիւղից այսպիսի վնասակար անդամներին: Ինչ իրաւունքով են դիմում «ազատականները» դաւառապետներ միջոցներ ձեռք առնելու՝ մշտական գողութիւններից ազատել իրանց, քանի որ գողութիւնը իրանց ևս կարող են տեղն ու տեղն ոչնչացնել: Գոչեց մի քանի «համախոսների» զրպանները տուժում են...

Վրէժանդութեան ձեռքն ու չափը այժմ գիւղերում այնպիսի լայն ծաւալ են ստացել, որ փոքր ի շատ է կրկնված մարդու մէջ զարմանք և մի և նոյն ժամանակ զգուշանք ու սարսափ են առաջ բերում: Բաւականութիւն ստանալու համար, բնքն են դիմում արդարադատութեան: Փորձեք ցոյց են տուել գիւղացուն, որ վնասն ստանալու համար անհրաժեշտ է կաշառել թէ տանուէրին և թէ գիւղական դատաւորներին, որ ծախվում է կրկնապատկելով, քան վնասն էր և որ արդարացի զանգաւոր յաճախ մնում է առանց հետևանքի, որովհետեւ տանուէրը և դատաւորները հակառակորդից նոյնպէս ստանում են «մի բան»... Օգնել միայն կարող է հաշտաբար դատաւորը, բայց դա համար էլ հարկաւոր են նոր ծախքեր, նոր վկաներ, որոնք նոյնպէս կաշառվում են երկու կողմից, շատ անգամ սուտ երկրում և թագցնում իսկական եղեւթիւնը: Արեւի մի ելը չը գտնելով, վնասվածը դիմում է սուր միջոցների. կոտորում է հակառակորդի այդու ծառերը, հրդեհում խոտի զէգերը, զարմանոցը, ցանկապատը, գողանում ցորենի խորածերը, կոտորում անասունների պոչը կամ կոտորում ոտը, սուտ լուրեր տարածում նրա կնոջ կամ աղջկայ մասին... Վրէժանդութեան մի ձեռն էլ կայանում է նրանում, որ պատուաւոր անձը, կաշառելով անտառի պաշտօնեային, խնդրում է նրան արձանագրութիւն կազմել այս կամ այն մարդու վրա, որը իր խօսքը չի կա-

Ն. Բ. Մելիք-Շահնազարեան

նիս ևս որովհետև փաստաբանն աղդար գործի հետ միասին վերցնում է նաև անարդար գործ և, չնորհալ փաստերի յեղաշարժման ու վկաների շինծու ցուցմունքները, շատ անգամ անարդար գործերն արդարացնում է, չփոխելով նաև դատաւորներին, այդ պատճառով հասարակութիւնը եկել է այն համոզման, թէ փաստաբանը «սուտն անցկացնող է», «սուր սպիտակացնող»:

Ահա այդպիսի ընդհանրացած համոզմունքը ամենայնպէս չարագործին մղում է դէպի փաստաբանի շէմքը՝ փողի ոյծով աղաւաղելու ձեռք բերելու, և այդպիսի երևոյթներն նպաստում են յանցանքների և ոճիրների յաճախակի կրկնվելուն:

Ճիշդ է, լինում են և կան անհատներ, որոնք բացառութիւն են կազմում, կանգնած լինելով իրանց կոչման բարձրութեան վրա՝ իրանց դէպիւզ ընտրելով արդարութիւնն ու ճշմարտ գործի պաշտպանութիւնը, բայց ընդհանուր երևոյթները չեն բացառում անհատական օրինակներով, այլ մեծամասնութեան, իսկ մեծամասնութիւնը, տարաբարձրաբար, հանդիսանում է իր կոչման անարժան, ծախում է ոսկուն՝ իր խղճը, արդարութեան գործը: Մենք ճանաչում ենք երդուեալներ, որոնք մի բարդ դատի մէջ պաշտպանելու համար վերցրել են երկու միմեանց մեղադրող մարդկանց գործերը:

Այս բոլորից յետոյ, ինքն ըստ ինքեան, հարց է ծագում, ո՞վ է մեղաւոր արդարադատութեան գործի կազարման մեր մէջ. հասարակութիւնը, որի յանցաւոր անհատները՝ պատժից խուսափելու նպատակով, փաստաբաններին են դիմում, թէ իր կոչման անարժան փաստաբանը, որ ոսկուն փայլեց շլացած, իր էժանազին մարդասիրական ճառերով չէ քաշվում չարագործին անմեղ հրեշտակ ցոյց տալու:

Ա.—Իօ

ՆԱՄԱԿ ԲԱՔՈՒՄԻՑ

Նոյեմբերի 16-ին

Հոկտեմբերի 18-ի քաղաքային ընտրութիւններին յետոյ, ընտրողները մի քանիսը պ. Նահանգապետին մի դանդաղ ուղարկեցին, որով մասնաճիւղ անելով ընտրութիւնների մի քանի անձնութիւնները, խնդրել էին եղած ընտրութիւնները բեկանել և նորից նշանակել: Իբրև փաստ ընտրութիւնների անձնութեան, զանազանութիւնը առաջ էին բերել ի միջի այլոց, հետեւել դէպքերը՝ Նախ՝ որ ներկայ եղող ընտրողների ցուցակ չէ եղել կազմված. այդպիսով ոչ ժողովի նախագահն է միջոց ունեցել լիակատար ընտրողներին ճիշդ թիւը, ոչ էլ ընտրողները, ներմանապէս և թէ մի ինչքան ձայն ունին: Երկրորդ՝ դաշինքում եղել են կողմնակի մարդիկ, որոնք կարող էին ազդել ընտրողների վրա: Իբրև կողմնակի մարդ յիշված է հայր Ձիւկվաձէ և ուրիշները: Երրորդ՝ ընտրութիւններին մասնակցել են նաև թիւքահայտակներ, որոնցից երկուսը նոյն իսկ ընտրվել են ձայնաւոր: Չորրորդ՝ մի պարոն, որ դեռ ևս 25 տարեկան չը կայ, մասնակցել է ընտրութիւններին իր հօր տեղ, չունենալով նրանից օրինաւոր հաւատարմութիւնը: Հինգերորդ՝ դաշինքին կից եղել է բուլճար, որ դռները բաց էին և այդ պատճառով էլ ընտրողներից մի քանիսը «լաւ արածագրութեան մէջ են եղել»: Նրանցից մէկը նոյն իսկ նշանակվել է բուլճարի համրող: Վեցերորդ՝ մասնաճիւղ է արված տուփերի անպէտքութեան վրա. մօտ 30 հատ տուփերի վրա սպիտակ և սև մասերը բաժանած չեն եղել, մօտ 15 տուփեր ունեցել են ոչ այնքան խոր արկղիներ և, չնորհալ դրան, բուլճարը լիափվել են տուփերի և արկղիների արանքները. մի քանի տուփերում լաւ չեն եղել բաժանված սև և սպիտակ մասերը, այնպէս որ տուփ ջրէնքեր իրանց տեղերը չէին ընկնում՝ սեւերն ընկնում էին սպիտակ արկղը և հակառակը, ինչպէս, օրինակ, պ. պ. Խոջամիրխանցի, Վալսկու, Սէլբերի և ուրիշների տուփերն էին:

Պ. Նահանգապետն ուշադրութիւն չը դարձրեց այդ գանապատին և ընտրութիւնները հաստատեց: Երէկ, ամսիս 15-ին, Ժողովարանի դաշինքում կայացան լրացուցիչ ընտրութիւններ: Ընդամենը պէտք էր ընտրվելին 14 ձայնաւոր և 8 կանդիդատ: Փոփոխվել ցանկացողներն թիւը հասնում էր 66-ի: Ընտրվեցին 14 ձայնաւոր և մի կանդիդատ: 11 հոգի վրացիներ են, 2 հայ և 1 լեհացի: Ուրեմն մեր այժմեան դուժայի ձայնաւորներից 19 հոգի վրացի են, 8 յոյն, 7 ռուս, 6 հայ և 2 թիւքը. ընդամենը 42 հոգի, որոնցից մէկը կանդիդատ է համարվում:

Ընտրութիւնները չանցան անպայման մեղադրելի. նախագահ պ. Լ. Ասատրյանի հարցնում է մի մասնեական վրացուց՝ ցանկանում է արդեօք բուլճարից: Մասնեականը, չը գիտենալով ռուսերէն, չէ պատասխանում: Նրա տեղ

ուրիշներն են պատասխանում: Նախագահը յայտնում է, որ ում հարցնում է՝ թող նա պատասխանի: Բացատրում են, որ մասնեականը ռուսերէն չէ հասկանում, թող բարեհաճէ հարցնել վրացերէն: «Սա պարտաւոր չեմ վրացերէն իմանալ», պատասխանում է պ. Նախագահը, որը վրացի է և շատ լաւ գիտէ վրացերէն:

Ար. Մակարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի քաղաքային դուժայի իր վերջին նիստում, որ տեղի ունեցաւ երկուշաբթի, նոյեմբերի 16-ին, վերջացրեց բեկեղական ընկերութեան հետ կապած դաշնագրի ընդունելը: Դուժայի որոշումը նահանգական ատենանի կարծիքի հետ միասին պէտք է ներկայացնուին իշխան կառավարչապետի հայեցողութեան: Կառավարչապետի հաստատութիւնն ստանալուց յետոյ միայն քաղաքը կարող կը լինի օրինաւորապէս ձեւակերպել դաշնագրերը:

Մեր խմբագրութեան անդամ խաչատուր Մալուսեան երէկ, նոյեմբերի 17-ին, ուղևորվեց ժամանակաւորապէս արտասահման:

Նոյեմբերի 16-ին Թիֆլիսի դատաստանական պալատում ընկնել մի հետաքրքիր գործ, որի էությունը հետեւեալն է: Սերգէյ Միլիով 1891 և 1892 թվերին մուրհակով պահանջում էր Միւրգով կողմնակցներից 40,000 ռ. ուրիշ անձինքների միջոցով: Այդ մուրհակը Գրիգոր Միրզոբով 1884 թիւ ապրիլի 26-ին տուել էր իր և իր եղբոր՝ Մինայի կողմից Ալեքսանդր Մանթաշիլին: Միւրովի գիտէր, որ այդ մուրհակը վճարված է, և Գրիգոր Միրզոբով կորցրել էր: Նահանգական դատարանը ընդհանր աղ գործը 1896 թիւ դեկտեմբերի 19-ին, վճռեց՝ զրկել Միլիովին բոլոր իրաւունքներից և կալանաւորների բաժանմունքին ուղարկել նրան մի տարով և 4 ամսով: Այդ վճիռը զէմ Միլիովի բողոք ներկայացրեց դատաստանական պալատին: Դատաստանական պալատը Միլիովին միջոցաւ ճանաչեց միայն տարեբայութեան մէջ և վճռեց՝ զրկել նրան բոլոր իրաւունքներից և 3 ամսով ու 16 օրվա բանտարկութեան դատապարտել նրան:

Մեր խմբագրութեան մէջ ստացվեց Ս. Զեյնալու մի նոր գիւղատնտեսական քրօնիւրը՝ «Հաւ» վերնագրով, տաան և երեք նկարով: Բրօշիկի նպատակն է ծանօթացնել գիւղական աղքատեանութեանը հաւերի ընտիր և արդիւնաւոր տեսակների հետ և հաղորդել տանտիկիւններին հարկաւոր գիտելիքներ հաւապահութեան վերաբերմամբ: Բրօշիւրը բաժանվում է ձրի:

Մայրաքաղաքի լրագրները հաղորդում են, թէ ժոյն օրից, որ գերմանական դպրոցներն անցան մոլորվողական տաւաւորական միլիտարութեան վարչութեան տակ, ուսուցիչ լեզուի դատաստանութիւնը այդ դպրոցներում այնքան աղող է ընթանում, որ շատ անգամ ուղղափառ ուսուցիչները հաղորդում են իր երեխաներին ընդունել տալ այդ օտարադասան դպրոցներում: Ի նկատի ունենալով այդ հանգամանքը, ուսումնարանական վարչութիւնը պարզաբանեց, թէ ուղղափառ աղքատեանութեան պատկանող երեխաներին կարելի է ընդունել օտարադասան դպրոցներում միայն այն դէպքում, եթէ 1) զըլքողի ուսուցիչը կը լինի ռուս ծագում ունեցող անձն և 2) եթէ տեղական հասարակութիւնը միջոցներ կը տա՝ կրօնուսուց ուղղափառ քահանային վարձատրելու համար:

ԵԿԱՏԵՐԻՆՈՒՄԻՐԻՑ մեզ գրում են. «Մեր թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Սեդրակեան, թեմի չըջնուց յետոյ, մի համակրելի կարողաբութիւն է արել, որով խիստ արգելում է թեմի քահանայներին տօն օրերը այս կամ այն ծիսակնի տունը նշխար տանել: Այդպիսով վերանում է փող ժողովելու մի տեղի սովորութիւնը, որ մասնաւոր շատ տարածված է Հիւսիսային Կովկասում ապրող հայերի մէջ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԻՏԻՆ

ՆԱՄԱԿ ԹԻՐԻՔԻԱՅԻՑ

Կ. ՊՕԼԻՍ, հոկտեմբերի 26-ին

Կրեմլի թուրք զօրքերը կղզիներն դուրս հանելու ձախուց համար՝ սուլթանը երմտական նախարարութեան ղեկաւոր պաշտօնեաներէն Ֆէթիի բէկի միջոցաւ 45,000 օսմանեան լրբարկեց բաժնեկու համար զօրքերուն՝ որ 3200-ի չափ կան: Կրեմլի զօրքերն ուղղակի Մակեդոնիա գնացին, ուր սերբիացոց և թուրքերուն միջև յարաբերութիւնները լարուած են:

Բուլղարները տակաւին հաստատ կը մնան իրենց յայտադրին վրա՝ օր մը, վերջապէս, գրաւելու համար Մակեդոնիան՝ արդէն այս օրերէն բուլղարացած նկատելով զայն: Սէլանիկի և Մանասլուրի հարուստ բուլղարները, կարուածական իրաւունք մը ձեռք բերելու համար, այժմէն կը դնեն բոլոր այն հողերը, որ ի վաճառ հանուած են: Այս առթիւ Բ. Գուռն հրամաններ արձակեց Մանասլուրի և Սէլանիկի կուսակալներուն՝ որ հողային գնումներն արգելին հաշտարար եղանակաւ: Յունաստանի Գէորգ թագաւորը Ս. Փրկչի Առաջին կարգի պատուանշանն ընծայեց մայրաքաղաքի յունաց պատրիարքին՝ ի վարձագրութիւն այն աշխատութեանց, զոր ձեռք առաւ Մակեդոնիայի բուլղար առաջնորդներուն հրովարտանքը չի տրուելու համար: Այսու հանդերձ մենք ստոյգ տեղեկութիւններ ստացրեմք՝ որ Սէրէի, Տրապիսի և Սէլանիկի առաջնորդական հրովարտանքներ արուած են սուլթանին կողմանէ ճիշդ այն օրը՝ յորում Ֆէթիի մէջ բուլղար եկեղեցոյն օծման հանդէսը կատարուեցաւ:

Արդէն Օրթոդոքս էստէլիզմն մասը լաւ ըմբռնած է, թէ սուլթանն ու յունաց պատրիարքը՝ պալականութեան տարածման հետամուտ են: Բայց տեսնե՛ք ապագան՝ ձր պիտի յանգնի Հիւսիս, որ կրեմական հարցը վերջացաւ՝ անուշտ մակեդոնականը պիտի սկսի: Սպասել պէտք է քիչ մ'ալ:

Թուրքերը շատ գէշ կը խօսին Վիլհելմ II-ի դալուն ու երթալուն վրայ: Իրենց բոլոր յոյսն ի դերն եղաւ: Կը կարծէին թէ նորին վեհապետութիւնն անուշտ պիտի համոզուէր մեծ պետութիւնները, որ ետ կենան իրենց խորհուրդէն՝ Կրեմէի մասին, ապա թէ ոչ ինչու միւլիոն լիւրաներ ի դուր վառնել, մինչդեռ անդին հաղաբարուր պաշտօնեաներ ամբիւնելով մէկ լրբայի երես չեն տեսած: Այս առթիւ թուրքերէն շատերը հիմա բանաստեղծ կ'աղեր են:—Անցեալ օր՝ թուրք մը ձեռքս անցաւ, որուն վրայ թուրքերէն և ֆրանսերէն լեզուներով հետեւալ ոտանաւորը գրուած էր, զոր «Մշակի» ընթերցողաց զուարճութեան համար յօռալ կը բերենք:

«La visite de cette impériale tête
Nous a coûté notre très chère Crète,
Et pendant ces jours de fête
Le coq a perdu sa crête».

«Իմբէրատօր թէշրիֆէրի եւիլիւդէն
Շու խօջ Կրեմէն էլիմիզլէն սաւուշուու,
Հօրօզ տաիի շու մէսերէթի կիւնլէրտէ
Իպիկիիի գաֆաարնդան ուշուրդու»:

(Թարգմանութիւն)

«Սա մեծ կայսեր այցելութեան երեսէն
Ձեռքէ եղաւ մեր սիրելի Կրեմէն,
Ուրախութեան այս օրերուն մէջ հաւն ալ
Իրեն բըրբուր կորսնցուց իր գլխէն»:

«L'Arménie» կ'ըսէ, թէ «թուրքերուն կարծեցեալ յաղթանակը՝ Փետաղիոյ մէջ, այնքան ուռեցող սուլթանն, որ բացարձակապէս կը մերժէ երկրին վարչական բարենորոգումներն ի գործ դնել, և այս առթիւ, Յունաստանի ներքին գործոց նախկին նախարար պ. Մալիքովիսալիսի մէկ յայտարարութիւնը մէջ կը բերէ՝ զոր ըսած է անցեալները՝ «Gaulois» լրագրին մէկ ներկայացուցչին հետեւալ կերպով.

«Ինչ է Եւրոպայի մէջ տիրած այդ ընդհանուր գաղափարը՝ իբրև թէ սուլթանը, Յունաստանի դէմ բացած կռուին մէջ նոր զօրութիւն և կենդանութիւն մը ցոյց տուեր է: Ինչ կենդանութիւն էր այդ, ինչ զօրութիւն, զինուորական ուղղակի կարողութիւն, և ձր տեղ: Եթէ օր՝ սահմանադրութիւն վրայ մեր յամառ դիմադրութեան ժամանակ, որ ատեն թուրքերը՝ եւապատիկ քան մերը բազմաթիւ զօրքերով և բաւապատիկ աւելի զօրաւոր թիւնաթիւներով մնչքան աշխատեցան ու չի կորցնի զեղի ետ քշել: Վէլստինօյի մէջ մեր հիմաւալ ընդդիմութեան ժամանակ, երբ յաղթանակաւ ետ մղեցինք թուրքերու յարձակումներն ահազին ջարդ մը տալով անոնք: Փարտալայի առջին Եդէմ փաշայի ջուրն ինկած պլանին, կամ Գոսօկոյի առջին՝ իր անապոյտիկանց ժամանակ: Կարողացք անդամ մը տեղեկագիրը գերմանացի զօրապետ Ֆոն-դէ-Կոցին, որ սուլթանին բանակներուն վերակազմին է. նա ինքը խափա կը ընդհանրեմ թրքական բանակին թեսաղիայի մէջ ըրած գործերը, բայց բուն գրուածքին թաքուն միտքն հասկնալու համար՝ քանի մ'անգամ կարդալու է, վառն գի տեղեկագիրը պատրաստող զօրապետը՝ քիչ մը մեղմիւ կը խօսի նկատմամբ թուրքերուն, որ զինուորութեան մէջ իր աշակերտներն են: Կոցի զօրապետը նախ և առաջ պիտի խոստովանի, թէ մենք, Գոսօկոյի մէջ, եթէ քանի մը վաշտ զօրք աւելի ունեցած լի-

նէինք՝ ապահովապէս թուրքերուն կը յաղթէինք և շատ ջանքախիչ կերպով: Թուրքերուն ծրագիրն էր՝ պաշարել մեր փոքրիկ բանակը և զայն գերի բռնել, բայց այդ ծրագիրը չի յաջողեցաւ: Մենք աւելի շատ մարդիկ գերի բռնեցինք թուրքերէն, քան թէ անոնք՝ յոյներէն: Մէկ խօսքով, եթէ մենք միմիայն ութսուն հազար զօրքով՝ լաւ պատրաստուած և կրթուած բանակ մը ունենայինք, կարող էինք թրքական հողին տիրանալ ինչպէս տիրացանք Նպլուսին»:

Ձուրեքիայի նահանգներէն՝ Վօտի աղաւաղական եկեղեցոյ սինհոդական յանձնաժողովը հետեւեալ պատասխաններ է ան հրաւիրադրին, զոր Նրուսաղի մի Աւետարանական հոգաբարձութիւնը՝ «Kuratorium der evangelischen Ierusalem-Stiftung», որուն բուն կեդրոնը Բէրլինի մէջ է՝ ըրած էր իրեն: «Ձեր յուլիս 25 թուահամար պատուական նամակաւ բարեհաճեք էլք հրաւիրել զմեզ՝ որպէս զի, եթէ կարելի է, մեր կողմանէ պատգամաւորներ զրկելով՝ մասնակցիմք ձեր աղօթքներուն, Նրուսաղէի մէջ, Ս. Փրկչի եկեղեցոյն քաջման պատմուն: Շատ դժուար ըրիստոնէական եղբայրական սիրոյ սոյն յայտարարութիւնէն՝ մեր անկեղծ երախտագիտութիւնը կը յայտնեմք: Մտադրած չեմք պատգամաւորներ զրկել, սակայն կը փութամք յայտնել մեր ուրախութիւնն առ այն, թէ Նրուսաղէի քաղաքը աւետարանական պաշտամանց նոր սրբավայր մը դարձունելու համար եղած ջանքերը՝ գլուխ երնելու վրայ են, ուստի կը մաղթեմք, որ Աստուած պնակէ այդ ջանքերն իւր գերազոյն օրհնութիւններով: Իցէ՛ թէ յԱնուն Փրկչի կառուցեալ այդ եկեղեցին, արժանաւոր իր գեղեցիկ անուան, առաջնորդքը, Յիսուսի Գրիստոսի, բազմաթիւ հոգիներով՝ դէպի փրկութիւն: Մեծապէս օրհնեալ լինեն Հովուաց և իրենց հօտին գործունէութիւնն ու ջանքերը ոչ թէ միայն Նրուսաղէի գոտուղ Ձեր հայրենակիցներուն, այլ նաև Ձեր լեզուն խօսող և հասկացող բոլոր ուխտաւորներուն համար, որ պիտի այցելին Սուրբ Տեղիքը: Փոյլ տուէք, պարտաւոր և յարգելի եղբայր, որ կրեմք այս տողերը՝ յայտնելով ձեզ մեր սրտագին մէկ ուխտը՝ թէ գերմանական աղբեղութիւնը, որ այս նոր եկեղեցոյ շնորհիւ միայն կրնայ աւելնալ Արեւելի մէջ, կը փափաքեմք՝ որ փութով տարածուի այդ սահմաններուն մէջ՝ ի փրկութիւն հարստահարեալ բազմաթիւ քրիստոնեաներու, և ի մասնաւոր, թշուառ Հայերուն՝ որոնց համար մեր եկեղեցին և մեր ժողովուրդը յատուկ հոգածութիւն մ'ունին»:

Արդէն գրած էի, թէ «Ճէրիտէի Շարգիլէ»-ի խմբագիր՝ Ճիվէլեկեանի՝ հրատարակել մտադրած «Սուրհանդակ անուն թերթ» դեռ հրապարակ չեղած՝ բարձրագոյն հրամանաւ դադրեցաւ, և ոչ թէ միայն թերթը դադրեցաւ՝ այլ և «սուրհանդակ» բառն իսկ բառարաններէ դուրս վտարուեցաւ: Դադարեցին քաղաքացիները սպիտակ, աղտոտ սողունի նման, «Բիւզանդիոնի» խմբագիր՝ Բիւզանդիոնի խմբագիր, որ քաղաքի ապականեալ տիրահաշակը՝ որ գնացելու հաւաճաներ է Ճիվէլեկեանի դէմ, «սուրհանդակ» բառն տալով մայն մեկնութիւնը՝ զոր արդէն գրած էի: Կարծէ աւելին խօսել այդ զազիր կենդանիին համար...:

Կիլիկիոյ կաթողիկոսութեան խնդրոյն վրա վերստին կը խօսուի: Դաւաճան եպիսկոպոսները միանալով Սիւրի եկեղեցոյն մէջ՝ Կենաց փայտին վրա երթում են ըրեք՝ միաբանութեամբ գործել և ընտրութեան գործն յայտնեցել: Միաձայնութեամբ նամակ մ'են գրեք՝ Օրմանեանին՝ որ փութացնէ ընտրութիւնը, նամակ մ'ալ Մերթիսեղէի եպիսկոպոսի աղղեր են՝ որ գիջանի յանձին իրեն կատարուելիք ընտրութիւնն ընդունել: Մերթիսեղէի մերժեք է այդ առաջարկին, և խոստացել են, երբ որ ձերանայ, Կիլիկիոյ վանքը քաշուի... Սրբազան արքեպ. Երբ պիտի ձերանայ...

Գալով Օրմանեանին, —ասոր նպատակն անն է՝ ինչ որ էր գործի սկզբէն ի վեր—եթէ կարելի լինի մաքրակալական դարձուանքով՝ միացնել Կ. Պօլսոյ պատրիարքութիւնն՝ այդ կաթողիկոսութեան հետ...

Յաջողութիւն կը մաղթէ

Իբրուկ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Մակեդոնական հարցը, «Frankfurter Zeitung» լրագրի խօսքով, սկսում է լուրջ կերպով դրացնել եւրոպական դեսպանների ուշադրութիւնը: Դեսպանները ամենին հաւան չեն ընձայում, թէ Բ. Գուռն ընդունակ կը լինի բեֆօրմիսը մտցնել: Նրանք համոզված են, թէ լուրջ բեֆօրմիսը Մակեդոնիայում անհնարին կը լինեն առանց պետութիւնների աջակցութեան:

Այնուամենայնիւ, առում են, թէ Բ. Գուրգը կը սկսի ընթացիկ մայիսէն եկող գարունը: Արդէն կուրծի օդը հազարաւոր են թէ թիւքաց արտաքին գործերի միջոցով Տէրքի-Փաշա առաջարկեց բողոքական դիպլոմատական ներկայացուցիչ Մարկովին ներկայացնել Բ. Գուրգը Բողոքական հանձնի ընթացիկ մի նախագիծ: Մարկովի գիտեց իր կառավարութեանը և հրահանգեց խնդրել:

— Բողոքական հեռագրում են «Berliner Tageblatt» լրագրին. «Ձեռնհաս աղբիւրներէն ստացված տեղեկութիւնները հաղորդում են, որ գերմանական կայսրի Կ. Պոլսում գտնված ժամանակ որոշվել է միացնել Բոսնիան Աւստրո-Ունգարիայի հետ: Միացումը կը հրապարակվի նոյեմբերի 20-ին, այն օրը, երբ կը լրանայ կայսր Ֆրանց-Յոզեֆի զանապալական յիշատակը: Բոսնիայի դիւնուրական նախագագետ կը նշանակվի արշիւրդը Լէօպոլդ Սալվատորա: — Վիեննայից հեռագրում են, որ Բողոքական տուր 10-ին ձեռնարկվելուն 220 ուսանողներ: Նրանցից շատերն են նոյն գիշերն և եթ արձակեցին ըստից, իսկ անկարգութիւններն ժամանակողներն տուգանքի ենթարկեցին: Գաւառի օրոշները պոլսեաների մէջ դադարեցրած են:

ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Այն օրից, որ թիւքերը հեռացան Կրեմէից, մասնական հրապարակաւորներն մէջ մի տարօրինակ ցանկութիւն յայտնեցին թիւքերէն լրագրի «նախադրական» Կառնիայում Այդ նոր լրագրի անունը կը լինի «Metanet», որ նշանակում է «նախադրական», և նրա խմբագիրը կը լինի Նուրի-բէյ Կառնի-գաղէ անունով մէկը, որ իր ուսումն առել է Ֆրանսիայում և շատ բարեկամ է կապիտան Չէրմազլի հետ, որը Կառնիայի անգլիական զորքամէջի հրամանատար է: Առաջ նա ծագումով էր Տուրքիայի բանակէն, մէկուն և «Ներսիսապոլի» թիւքերի կուսակցութեան է պատկանում: Կրեմէական մասնականները կարծում են, թէ որովհետեւ կղզին այժմ սուլթանի անմիջական իշխանութեան տակ չէ գտնվում, այդ պատճառով նա կարող է ապիտացիայի գործը կենտրոն դառնալ յեղափոխական կուսակցութեան համար:

Աթէնքի լրագրները բողոքում են այդպիսի դիտարկութեան դէմ և այն համոզմունքն են յայտնում, թէ ինքնավար կառավարութիւնը չի լինի տայ, որ Կրեմէում թշնամական գործունէութիւնն սկսվի սուլթանի դէմ: Կրեմէացիները ասում են այդ լրագրները—ազատվելով թիւքերաց լծից, ոչինչ հիմքեր չունեն թշնամական զգացմունքներ տածելու դէպի թիւքերին, այդ պատճառով բողոքական ինտրիգներն ժամանակացիները պէտք է արտոգրեն Կրեմէից: Թիւքաց նոր լրագրը իր առաջին համարի մէջ շատ հաշտ լեզու է բանցնում և խորհուրդ է տալիս Կրեմէացի մասնականներին չը հեռավար Կրեմէից, որովհետեւ նոր ինքնավար կառավարութեան ժամանակ նրանք աւելի ապահով և լաւ դրութեան մէջ կը լինեն, քան թէ առայժմ:

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 17 նոյեմբերի: Հակամանուստային յանձնաժողովի կողմից հաղորդվում է, որ Անդրը ղրջաղում, որը առաջվան պէս առանձնացրած է, հոկտեմբերի 28-ից նոր հիւանդացիներ չըկան. վերջին մնացած հիւանդները առողջացան:

ՊԵՏԵՐԳ, 17 նոյեմբերի: Զօրքերը մտան Կանգ-Սու:

Ռուսաց զեպան Գիրսի գաղը համարում են աւելի չափաւոր քաղաքականութեան նշան: Վերջին ամիսները ուսանելով մեծ ջանքեր էին թափում Պորտ-Արտուրը և Տալինի մէջ ամրացնելու համար: Առհասարակ, կարծում են, որ մինչ Սիբիրի երկաթուղու շինութեան աւարտելը Ռուսաստանը խաղաղասէր քաղաքականութեան կը հետնի:

ՊԱՐԻՉ, 17 նոյեմբերի: Տիկին Իրէֆուս իր ամուսնուց ստացաւ հետեւի հեռագիրը. «Ուրախակից եմ ձեզ բողոքող: Անողջութիւնս լաւ է: Թէ բարոյական և թէ ֆիզիկական տեսակէտից»:

«Bappe» լրագրում տպված է մի հեռագիր Ամստըրդամից, որը հաղորդում է թէ այնտեղ է եկել Էստէրհայի և ուրիշ ազգանուն է կրում: «Bappe», պատասխանելով Յուրիյի պատմանը, թէ ոչ ոքից նա Իրէֆուսի գործի վերաբերեալ հրահանգներ չէ ստացել, պնդում է, որ Պիկարի գործի սկսվելու օրից Պարիզի դիւնուրական նախագագետը անդադար յարաբերութիւններ է պահպանում Կալէնիակի, Իէրուէլի և զուգուրի դէ-Վլամի հետ. լրագրը հաւատարմութիւն է, թէ Յուրիյի կամենում էր հրաժարվել Պիկարին մեղադրելուց, բայց վերջը, ենթարկվելով զանազան ազդեցութիւններին, վերականգնեց մեղադրանքը:

ԼՕՆԻՈՆ, 17 նոյեմբերի: Շանգայից ստացված այն տեղեկութիւնը, թէ Չուզանեան կղզիների վրա բարձրացրած է բրիտանական դրոշակ, գործ է որ և է հիմքից:

Նոյն գործակալութիւնը հաղորդում է, թէ Հնդկաստանի միւնիստրութիւնը տեղեկութիւն ստացաւ, որ Գաղի մոլլան կրկին թշնամական գործողութիւններ է սկսել Սվատի հովտում, որի պատճառով կը պահանջվի բրիտանական զօրքեր ուղարկել այնտեղ:

ՊԱՐԻՉ, 17 նոյեմբերի: Սպանո-ամերիկական յանձնաժողովը գումարվեց կէսօրից յետոյ 2 ժամին: 2/3 ժամին սպանիացիները ընդունեցին Ամերիկայի պահանջները Ֆիլիպին կղզիների և Սուլու արշիպելագոյից հրաժարվելու վերաբերմամբ, բայց Սպանիան կը ստանայ 20 միլիոն դոլար վարձատրութիւն:

ՊԱՐԻՉ, 17 նոյեմբերի: Պատգամաւորների ժողով: Տաք վիճաբանութիւններ եղան Պիկարի գործի համար արված հարցադրումների առթիւ: Վիճաբանութիւններն մասնակցեցին Դիպլոմի, Փրէսիդենտ, Կալէնիակ, Պաւսկարէ, Միլիթան և ուրիշները: Կառավարութիւնը, պնդելով իր յայտարարութեան վրա՝ թէ իշխանութիւնները պէտք է բաժանված լինեն և կառավարութիւնը չը պէտք է միջամտէ արդարադատութեան գործին, վճեց թողնել դիտարկական դատարանին դատելու Պիկարին: Չայնատուրեան ժամանակ կառավարութիւնն ստացաւ 437 ձայներ ժամանակութիւն 73 ձայնի դէմ:

Խմբագիր՝ Ա.Լ.ԲԱՍՏԻՆԻ ԲԱՍՏԻՆԻ
Հրատարակող՝ ԱՐԹՐՈՒՆՈՒ ԺԱՌԱՆԳՆԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հարկաւոր է
ՅԱՄԱՆՈՒ ՀՆՈՑ ԵՆԿԵՑՈՒ ՀՄԱՐ
Դ Պ Ի Ր

Ձայնագրագէտ և աշուղ ձայնով. պիտի կարողանայ նաև իր ուսման պատրաստել նախապատուութիւն կը տրվի դպրոցաւարներին. պայմանաւորվել ցանկացողները դիմելու են՝ ՍԵՄԱԽԱ. Բաղոցինոյ ցաշենիկու Կապու Մարգարիտ. (Կ. Ս.) 6—6

Լոյս տեսաւ ՄԵՐ ԿԱԶՄԱՍ
Թ. ՊԱՏԻ, ԾՈՅԻ
ԵՒ ՍԵՂԱՆԻ
ՕՐԱՅՈՅՅՆԵՐԸ

ՀՆՈՒՄՈՒ ՇՈՒՆԻՆԻՍ ԵՒ ՆԵՐԱՅՆԵՐԸ
Ցանկացողները թող շտապեն մեզ յայտնելու, որպէս զի ժամանակին կարողանանք հասցնել:

Թիֆլիս՝ Մակար Չալկան
(Կ. Ս.) 13—20

ՄԱՌԻՉ
Կարգի գինը 25 կոպէկ
Ծախվում է բոլոր լաւ խանութներում:
4—5 (Կ.)

Մամուլի տակ է և չուտով լոյս կը տեսնի
ԱԼԵԿՍԱՆԴՐ ԺԱՏՈՐԻՍԵՆԻ
Բանաստեղծութիւնները
Երկուրէ Կատար
(Մօտ 225 երես, գինն է 1 ռուբ.)
Ցանկացողները պիտի դիմեն հեղինակին՝
Մոսկա, Կարետնի—Տաօվա, մեծ. կոմ. Իվանով, № 10. (Կ. Ս.) 3—10

ԲԺ. ՎԱՀՆԵ ԱՐԹՐՈՒՆԻ
ԸՆԻՈՒՆԻՄ Է ՀԻՒՆԻՆԵՐԻ
ժամանակաշարք բքի, կոկորդի, ըթի և ախանջի հիւանդութիւններով:
Առատեան 9—12 ժ.
Երեկոյան 4—7 ժ.
Գոլովնիկի պրոպ. № 28, տ. Աղամուլի:
8—10


Շնորհիւ ժամացոյցներ պատրաստելու կատարելագործութեան և մեծ քանակութեամբ վաճառվելուն, ես կարողացայ անցնել տարվայ նոյեմբերի 15-ից սկսած, ծախել տղամարդկանց գեղեցիկ և դիմացկուն ժամացոյցներ, արժանի ժամացոյցներ՝ 84 պորթանի, անձայն, բոլոր երեք ծածկոցներն էլ արուեստական ոսկուց, որ ոչնչով չի զանազանվում իսկական ոսկուց. անկէր կոչված ժամացոյցը, որ բանում է 15 բարով, մեխանիզմը խիստ ամուր, ինքնաբերական վերատուգած, լարումն առանց բանալիի:

ԸՆԻՈՒՆԵՐԸ՝ 10, 12 և 14 ՐՈՒՐԼԻՈՎ
(2 հատ 19, 23 և 26 ռուբլի): Նոյնպիսի ժամացոյցներ՝ միայն բանալիով լարվող, մի ռուբլով է ծան. նոյնպիսի ժամացոյցներ՝ կանանց համար, մի ռուբլով ծան: Գրաւոր երաշխաւորութիւն 6 տարվայ համար: 2 ռուբլի սկզբնական ստանալուն պէս՝ անմիջապէս կուղարկվին ուղած ժամացոյցները: Հասցէ՝ Торговой Фирмы

Я. М. ВАРКОВИЦКАГО
Ժրնեկի ժամացոյցների պահեստը Վարչա-վում, Պանկայա, 5. (Կ.) 7—10

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ, ԹԻՖԼԻՍՈՒՄ
Վ ա ճ ա լ զ ու ճ ե ն հ ե տ ե ա լ ն ո ռ գ ր ք ե ռ ը

Գր. Կ.	
ԱՂԱՆԵԱՆ Գ. ա. ը. Աղթամար տարական դպրոց. հայ մանուկ. համար. Թ. 1898.	— 10
Պատի օրացոյց 1899 թ. համար	— 50
ԵՐԻՏԵԱՆՑ Ա. Պատմութիւն 75-ամեայ դպրոցի ներսիսեան Հայոց հոգևոր դպրոցի	3 —
Թ. 1898 թ. Գ. 2 ր. փառակալով	—
ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ Ի. Սանահին, վանքի վիճակագր. պատկերով. Թ. 1898 թ.	—
ԹԱՌԱՅԵԱՆՑ Ս. Հայ ժողովրդի արհեստագործութիւնը Թ. 1898 թ.	— 40
ԼԵՐՄՈՒՆՑՈՎ, Դ. Արեւելեան վէպ. Թ. 1898 թ.	— 15
ԻՐԻՐ ԳԱԶԻՐԷԿ. Պատմաճիւղի Չէրքիզների կեանքից. Ս. 1898 .	— 25
ԴԼ.ՎԱՐԵՆԹԻ. Օղը և կեանքը. Թ. 1898 .	— 10
Գ. Բրանդա. Բանաստեղծը և հեղուր. Թ. 1898 թ.	— 25
ՍԵՆՏԻՔԻԱՆ ՍՏ. Վերանորոգի դատար, Բագու, 1898.	— 80
ՅՅՈՎԻ. Գ. Ա. Сношения Петра Великого съ Армянскимъ народомъ. Архивные документы. СПб. 1898.	5 —
«БРАТСКАЯ ПОМОЩЬ ПОСТРАДАВШИМЪ ВЪ ТУРЦИИ АРМЯНАМЪ» изд. 2.—փառակալով (սակաւորով)	4 25
Ն ո յ ն տ ե ղ ը վ ա ճ ա լ զ ու ճ ե ն	
ԵՐԻՏԵԱՆՑ ԱՂ. Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք 19-րդ դարում.	2 —
2 Կ. Իւրաքանչիւրը	
Патріархъ въѣхъ Армянь Нерсесъ 5-й Кн. Мх. Сем. и Кн. Елисаб. Ксаві-ріевна Воронцовы въ ихъ частной перепискѣ. Т. 1898 г. ч.	1 50
ՏԻՐԱՆԵԱՆ ԲԺ. Լ. Բժշկարան 1892 թ. Գ. 2 ր. կաղամած	2 40
ՏԵՐ.ԱՍՏԻԱՍԻՍԵԱՆ Կ. Գեղարուեստական արքայ հայ գործիչների Գ.	3 —
Պէտք է դիմել ուղղակի այս հասցեով՝ ԹԻՖԼԻՍ, Центральная Книжная Торговля, իսկ արտասահմանից՝ TIFLIS, Librairie Central. (Կ.) 1—5	



!!! ՀԱՉՈՒԱԳԻՒՏ ԴԵՊՔ !!!

Նրկար ջանք գործ դնելուց յետոյ, վերջապէս, ինձ աջողկեց նա-րաւորութիւնն ստանալ վաճառելու իր բանեղութիւնը և գեղեցկութեամբ նշա-նաւոր ժրնեկի «Փաւորիտ» ժամացոյցները՝ բաց, սեւ պողպատից, բնական տուար, լարված և ինքնաբերական ստուգված, ծածկի վրա ոսկի զարդարանք, որի վրա, ըստ ցանկութեան պատուիրողի, փորագրում եմ նրա մօ-նօ գրաւմը գեղեցիկ շղթայով և ամերիկական ոսկի բրելովով:

ՄԻՅՆ 5 ՐՈՒՐ. 25 ԿՈՊ.

2 հատ պատուէր տուողին 50 կոպ. զիջումէ լինում: 3 հատի համար՝ 1 ռուբլի: ՆՈՑԵՊԻՍԻ ԿԱՆԱՆՑ ԺԱՄԱՅՈՅՅՆԵՐ 1 ՐՈՒՐԼԻՈՎ ԹԱՆԳ:

Գրաւոր երաշխաւորութիւն 6 տարվայ համար: Ուղարկվում է 1 ռուբլի սկզբնական ստա-նալուց յետոյ:

Հասցէ՝ ТОРГОВОЙ ФИРМЫ Г. КОЛТУНЪ ВЪ ВАРШАВѢ, складъ амери-канскихъ и женеверскихъ часовъ.

Բաղմաթիւ շնորհակալական և գովասանական նամակներ: Պրէյս-կուրանտներն ուղարկվում են ձրի: 2—7

ՎԱՃԱՌԱՅՈՒՆՎՅՑ ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳԵՈՒԹԻՒՆ

ԹԻՐԻՔԻԱՅՈՒՄ ՎՆԱՍՎԱԾ ԶԱՅԵՐԻՆ

ԵՐԱՐԻՐ, ՆՈՐԻՑ ԲՈՒՎԱԾ ԵՒ ԼՐՏԵՐԱԾ ՀՐԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ԳԻՆԸ ԶԱՆԱՊԱՐԱՅԱՍՈՎ, 3 Բ. 70 ԿՈՊԵԿ

2-00 ВНОВЬ обработанное и дополненное изданіе ЛИТЕРАТУРНО-НАУЧНАГО СВОРНИКА

„БРАТСКАЯ ПОМОЩЬ ПОСТРАДАВШИМЪ ВЪ ТУРЦИИ АРМЯНАМЪ“.

Въ настоящее удешевленное изданіе, содержащее болѣе 140 статей разнообразнаго содержания въ прозѣ и въ стихахъ, вошло болѣе 40 новыхъ, знакомящихъ съ одной стороны съ ужасающими бѣд-ствиями турецкихъ армянъ, а съ другой—съ бытовыми и культурными условіями жизни армянъ въ прошломъ и въ настоящемъ. Въ книгѣ приложены двѣ отдѣльныя большія группы (болѣе 100 чело-вѣкъ) армянъ-переселенцевъ, снятыя съ натуры, а также болѣе 150 рисунковъ (40 новыхъ), въ томъ числѣ многіе въ цвѣтныхъ краскахъ и два: „Рѣзня армянъ въ Трѣбизондѣ 1895 г.“ И. К. Айвазов-скаго и „Весенняя буря“ Магдесіана, въ три тона.

Цѣна 3 р., съ пересылкой 3 р. 70 н.

Складъ въ конторѣ Русскихъ Вѣдомостей и въ книжн. магаз. Карбасникова на Моховой. NB. Лица, не окончившія счетовъ по 1-му изданію «Братской помощи», благоволятъ поспѣ-шить окончаніемъ таковыхъ.

Покорѣйшая просьба къ изданіямъ, сочувствующимъ цѣли сборника, перепечатать настоящее объявленіе.

Завѣд. ред. Гр. Джаншиевъ